Ի՞նչպես վճարել

Ձեր Ucom հաշիվը կարող եք վճարել.

- Ucom-ի վերալիցքավորման քարտերով
- 81 Ucom սպասարկման կենտրոններում
- ավելի քան 7000 կրպակներում և այլ սպասարկման սրահներում, ինչպես նաև՝ Երևան Սիթի, ՍԱՍ սուպերմարկետներում
- ArCa համակարգի բոլոր բանկոմատներով
- MegaPay,TelCell, Tandem վճարման տերմինալներով
- Հայփոստի ավելի քան 900 բաժանմունքներում Հայաստանի բոլոր քաղաքներում և գյուղերում
- հետևյալ բանկերում՝
- հետևյալ բանկերում՝

Ամերիաբանկ
Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրեկոլ Բանկ
Արարատ բանկ
Կոնվերս բանկ
Յունիբանկ
ՎՏԲ-Հայաստան բանկ
Հայէկոնոմբանկ
Արդշինինվեստբանկ
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ
Զարգացման Հայկական Բանկ
Անելիք բանկ
ՊրոԿրեդիտ բանկ
Ինեկոբանկ
Արցախ բանկ
Հայբիզնես բանկ

Վճարումը բանկային փոխանցմամբ կատարելու համար խնդրում ենք յուրաքանչյուր հաշիվ-ապրանքագրի դիմաց փոխանցումը կատարել "ՎՏԲ - Հայաստան Բանկ" ՓԲԸ - ի 16048054007108 հաշվեհամարին՝ նշելով Ձեր Ucom հաշիվը, որը կգտնեք «տվյալներ» հատվածում:
Դելֆին, Պանտերա, Թիթեռ, Արծիվ և Բացառիկ սակագնային պլանների համար վճարումն անհրաժեշտ է կատարել մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը, ընդ որում՝ վճարում եք ինչպես տվյալ ամսվա ամսավճարը, այնպես էլ

նախորդ ամսվա բացասական հաշվեկշիռը՝ դրա առկայության դեպքում: Ամսավճարն անհրաժեշտ է վճարել, եթե անգամ ծառայությունից չեք օգտվել, օրինակ երկրից բացակայելու պատճառով: Եթե մինչև վճարման օրը Ձեր հաշվեկշիռը լիցքավորել եք Ձեր ամսավճարի չափով կամ ավելի շատ, ապա ընթացիկ ամսվա ամսավճարը և նախորդ ամսվա բացասական հաշվեկշիռը գանձվում է տվյալ գումարից: Ամսվա ընթացքում ներառված րոպեները, գումարը, SMS-ները, ՄԲ-երը և բացասական հաշվեկշռի սահմանաչափը սպառելու դեպքում կարող եք շարունակել օգտվել Ucom-ի ծառայություններից՝ պարզապես լիցքավորելով Ձեր հաշիվը: Ձեր սակագնային պլանում ներառված րոպեները, գումարը, SMS-ները և ՄԲ-ները ամբողջությամբ չսպառելու դեպքում դրանք զրոյացվում են և չեն տեղափոխվում հաջորդ ամիս: Եթե Դուք մի քանի հեռախոսագիծ ունեցող Ucom Դելֆին, Պանտերա, Թիթեռ, Արծիվ և Բացառիկ սակագնային պլանների բաժանորդ եք, վճարում եք բոլոր հեռախոսագծերի համար ինչպես տվյալ ամսվա ամսավճարները, այնպես էլ առկայության դեպքում նախորդ ամսվա բացասական հաշվեկշիռը՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը: Ներկայացված հաշիվն ամբողջությամբ չվճարելու դեպքում բոլոր հեռախոսագծերը ժամանակավորապես ապաակտիվացվում են: Ակտիվացված բոլոր հեռախոսագծերը կօգտվեն միևնույն բացասական հաշվեկշռի սահմանաչափից: Եթե հեռախոսագծերից մեկի հաշվեկշիռը հասնում է ընդհանուր սահմանաչափին, բոլոր հեռախոսագծերը ժամանակավորապես ապաակտիվացվում են: